



**ԱՐԵՎՍՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ (ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ) ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ**

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի)

Եկրորդ նիստի 15-րդ գումարմանի արձանագրութիւնները

2022 թ. Ապրիլի 13-ին,

Նիստի սկիզբը ժամը 09:00- աւարտը՝ 11:40:

Ընտրուած 49 պատգամաւորներէն մասնակցած է 15 պատգամաւոր (առցանց միջոցով) :

**Ա. Քննարկեցին՝**

Օրակարգի միաձայն ընդունելութիւնը:

**Բ. Լսեցին՝**

ԱՀՀ Նախագահ Արմենակ Աբրահամեանի ելոյթը, ով խօսեցաւ ՄԱԿ-ի ներկայացուցած փաթեթի մասին, որը կը ներառէ Էաւելի քան 2000 էջ նիւթեր՝ Արեւմտեան Հայաստանի վերաբերեալ: Այն կազմուած է 20 էջէ, իսկ մնացած նիւթերը ներկայացուած են հղումներով, քանի որ ՄԱԿ-ի ներկայացուելիք փաթեթի ծաւալը պէտք չէ գերազանցէ 20 էջը:

**Գ. Լսեցին՝**

ԱԺ նախագահ Նելլի Հարութունեանի կողմէ, 7-րդ գումարի 2-րդ նստաշրջանի օրինագիծի ներկայացումն ու ընթերցումը:

**Որոշեցին՝**

7-րդ գումարի 2-րդ նստաշրջանի օրինագիծը քուէարկեցին եւ ընդունեցին միաձայն:

**Դ. Լսեցին՝**

ԱՀՀ ԱԺ-ի ներքին կանոնակարգի հետ կապուած աշատանքները, Լեոնարտո Պասամաճեանի հաշուետուութեան ներկայացում (որը չի կայացաւ անոր բացակայութեան պատճառով):

Աննա Մելքումեանի բացատրութիւնները նախորդ հարցերուն:

**Քննարկումներ՝**

Հարցերուն պատասխանեցին, ԱՀՀ Նախագահ Արմենակ Աբրահամեանը, կառավարութեան ղեկավար Վարչապետ Սեդա Մելիքեանը եւ ԱԺ փոխնախագահ Սիմոն Տարունեանը:

**Ե. Քննարկեցին՝**

Ընթացիկ հարցեր, Ապրիլ 24-ի հետ կապուած միջոցառումները տարբեր երկիրներուն մէջ: Պատգամաւորները ներկայացուցած են, թէ որտեղ եւ ինչպէս տեղի պիտի ունենայ միջոցառումները:

## **Որոշեցին՝**

Արտաքին գործերու յանձնաժողովը պետք է ներկայացնէ տարբեր երկիրներուն մէջ կայանալիք միջոցառումներու վերջնական ցուցակը :

Արտաքին գործերու յանձնաժողովի անդամ Երվանդ Ալիխանտրո Դուրումեանը գրած է, որ այդ յանձնաժողովը միայն խորհրդակցական մարմին է, եւ այդ գործը Արտգործնախարարի գործառոյթն է:

### **Անի ՊԵՏԵԻԵԱՆ**

**Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Քարտուղար**

### **Նելլի ՀԱՐՈՒԹՅՈՒՆԵԱՆ**

**Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Խորհրդարանի) Ազգային Ժողովի Նախագահ**

### **Արմենակ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ**

**Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ**

---

[parliament@western.armenia.eu](mailto:parliament@western.armenia.eu)